

33(571)
5.12.2019

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և գիտաբար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՄԻՇՏ ՕՐԻՆԱՍԵՐ ՈՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Արցախի՝ իբրև հայկական տարածքի հնամենի լինելը վկայում են բազմաթիվ պատմաճակատագրային կրթություն ու քարակերտ վկայագրեր: Բայց ոչ պակաս կռվան է այն, որ շուրջ մեկուկես հազարամյակ առաջ այստեղ ընդունվել է իրավական մի բացառիկ փաստաթուղթ, որի նմանը շատ երկրներ ընդունել են միայն դարեր անց: Խոսքը 5-րդ դարում Վաչագան Բարեպաշտի օրոք Աղվենի վանքում ընդունված «Կանոնական սահմանադրության» մասին է:

Հատկանշական է, որ «Կանոնական սահմանադրությունը» չի ընդունվել արքայական քմահաճությամբ: Վաչագան Բարեպաշտ թագավորը հնարավորություն է տվել այն նախ քննարկել, մշակել ու նոր միայն հավանության արժանացնել: Այդպես հնարավոր էր միմիայն արդարամտության հակված թագակիր ժողովուրդ ունենալու պարագայում, և Արցախն ունեցավ այդ եզակիությունը, որի շնորհիվ էլ կարողացավ դիմագրավել ժամանակի բոլոր փորձություններին:

Արդեն քսաներորդ դարավերջին, վերստին բարձրացնելով ազատության դրոշմը, Արցախը դարձավ ապավինեց իրավունքի անկախելի ուժին: Արդեօրոշման հետևանքով 1991 թվականի դեկտեմբերի 10-ը Արցախի ու ողջ հայության համար դարձավ վճռականության ու միասնականության հուսալի հարթակ: Իսկ մեկուկես տասնամյակ անց՝ 2006-ի դեկտեմբերի 10-ին, արցախցին «այդ» սասց նահատակաց արյամբ կերտված հայաշունչ երկրի հիմնական օրենքին՝ Սահմանադրությանը:

Նկատենք՝ թե՛ անկախության և թե՛ սահմանադրական հանրաքվեներն անցկացվել են Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը: Սա, անշուշտ, խիստ խորհրդանշական է իր պատմաքաղաքական նշանակությամբ: Սահմանադրականությունը սոսկ կանոնակազմության հայտանիշ չէ, որով պետությունները կառուցում են իրենց ներկայում և ապագան: Այն նաև ապրելակերպ է, հղկված ավանդույթ ու նպատակադրություն: Նոր մարտահրավերները կարող են պարտադրաբար փոփոխել Հիմնական օրենքի առանձին դրույթներ, կատարել նորամուծություններ և անգամ ստիպել հրաժարվել մինչ այդ գերակայող կարծրատիպերից, սակայն ժողովրդի ընդհանրական ոգին, որ թրծվել է դարերի մեջ, միշտ մնում է անփոփոխ: Մեր երակներում նույն արյունն է, ինչ եղել է Վաչագան Բարեպաշտի ժամանակներում ու դրանից էլ շատ առաջ: Մենք նույն հայն ենք՝ օրինաւեր ու օրինապաշտպան: Եվ այդ վստահությանը էլ գնում ենք «դեպի դարերը նորից, դեպի վառվող ապագան»:

Թող, ուրեմն, անհատում լինի մեր Ընթացքը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՅ ԿԳՍ ՆԱԽԱՐԱՐ ՆԱՐԻՆԵ ԱՂԱԲԱԼՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԱՄՆ-ՈՒՄ



Նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 2-ը աշխատանքային այցով ԱՄՆ-ում էր գտնվում Արցախի Հանրապետության պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱՅ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, և ԱՄՆ-ում Արցախի մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը: Այցի շրջանակներում տեղի է ունեցել նախա-

այդ թվում՝ դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման, տարածաշրջանային զարգացումների և Արցախի սոցիալ-տնտեսական, կրթական, մշակութային զարգացման հեռանկարների շուրջ:

Ամերիկայի հայկական համագումարի Արևմտյան ափի ներկայացուցիչների հետ կայացած հանդիպմանը Նարինե Աղաբալյանը կարևորել է «Հայաստան» համա հայկական հիմնադրամի գործունեությունը և ընդգծել կառույցի միջոցով Արցախում և Հայաստանում արդեն իրականացված ծրագրերի անհրաժեշտությունը: ԱՄՆ կատարած աշխատանքային այցի շրջանակներում ԿԳՍ նախարարը մի շարք հարցազրույցներ է տվել ԱՄՆ արևմտյան ափում գործող լրատվամիջոցներին:

Նոյեմբերի 26-ին ՀԱԵ ԱՄՆ արևմտյան թեմի առաջնորդարարուն Արցախի պատվիրակության



րար Աղաբալյանի հանդիպումը YMCA-Գլենդեյլի խորհրդի ղեկավար կազմի հետ, քննարկվել է հետագա համագործակցության հարցերի լայն շրջանակ:

Փոխգործակցության հարցեր են քննարկվել նաև Գլենդեյլի Հանրային քոլեջի Հոգաբարձուների խորհրդի հետ տեղի ունեցած հանդիպմանը: ԿԳՍ նախարարը եղել է ուսումնական հաստատությունում, ծանոթացել կրթական գործընթացին, քննարկել Արցախի կրթօջախների հետ համագործակցության հնարավորությունները: Ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ:

Նոյեմբերի 25-ին պատվիրակությունը հանդիպել է ԱՄՆ արևմտյան ափում գործող Ռամկավար-Ազատական և Սոցիալ-Դեմոկրատական (Հնչակյան) կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Մտքեր են փոխանակվել համագաղթյին հարցերի,

հետ հանդիպմանը ներկա էին եկեղեցական խորհրդի անդամներ՝ թեմակալ առաջնորդ Մուշեղ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի գլխավորությամբ: Արցախի թեմի առաջնորդն անդրադարձել է հեռուստա-

մարաթոնի ծրագրերին, շեշտել համագաղթյին նշանակության ծեռնարկներում եկեղեցու դերը:

Պատվիրակությունը հյուրընկալվել է նաև Գլենդեյլի «Վահան և Անուշ Շամլյան» վարժարանում: ԱՅ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը ծանոթացել է կրթօջախի պայմաններին, զրուցել ուսուցիչների և աշակերտների հետ: Համատեղ ծրագրեր իրականացնելու պայմանավորվածություն է ձեռք բերվել:

Օրվա երկրորդ կեսին պատվիրակությունը ԱՄՆ-ում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանի ուղեկցությամբ



համագործակցության և նահանգում Արցախի մշակութային օրերի անցկացման հնարավորությունները: Սենատոր Պորտանտինոն նախագահում է Սենատի Կալիֆոռնիայի, Հայաստանի և Արցախի միջև երկկողմ առևտրային և մշակութային համագործակցության հանձնաժողովը:

այցելել է Գլենդեյլի «Աղվենտիստ Հելթ» առողջապահական կենտրոն, որը 2015 թվականից բարեգործական ծրագրեր է իրականացնում Հայաստանում և Արցախում: Կենտրոնի պատասխանատուները վստահեցրել են, որ հայրենակիցներին անվճար բուժօգնություն ցուցաբերելու ծրագրերը շարունակվելու են:

Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանն ու Նարինե Աղաբալյանը Արցախի շուրջ վերջին զարգացումների մասին են խոսել Հայ Հեղափոխական Դաշնակցության արևմտյան ափի գրասենյակում: Հանդիպմանը ներկա էին ՀՀԳ բյուրոյի և Կենտրոնի ներկայացուցիչներ:

Օրվա վերջում պատվիրակները մասնակցել են Հայ օգնության միության գրասենյակում կազմակերպված ընդունելությանը, պատասխանել ՀՕՍ-ի շրջանային վարչության անդամների հարցերին:

Նոյեմբերի 27-ին ԱՅ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը հանդիպել է Կալիֆոռնիայի նահանգային սենատի անդամ Էնթոնի Պորտանտինոյի հետ: Հանդիպմանը քննարկվել են կրթական և մշակութային կապերի ակտիվացման, մասնավորապես՝ Կալիֆոռնիայի և Արցախի կրթական հաստատությունների միջև

Աշխատանքային այցի շրջանակում ԿԳՍ նախարարը նոյեմբերի 28-ին մասնակցել է Լոս-Անջելեսում «Ես իմ անուշ Հայաստանի. կենարար ջուր և արև համայնքների» խորագրի ներքո տեղի ունեցած «Հեռուստամարաթոն-2019-ին»: Հանգանակված միջոցները կուղղվեն խմելու ջրի մատակարարման և արևային էներգիայի կիրառման ծրագրերի իրականացմանը Արցախում, ինչպես նաև Հայաստանի Տավուշ, Լոռի և Շիրակ մարզերում:



ԱՄՆ արևմտյան ափ Արցախի պատվիրակության կատարած աշխատանքային այցի շրջանակում դեկտեմբերի 1-ին տեղի է ունեցել ԱՅ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանի հանդիպումը Հայ կրթական հիմնարկության ղեկավար կազմի հետ:

Հիմնարկությունը բազմաթիվ ծրագրեր է իրականացնում Հայաստանում և Արցախում: Հանդիպմանը պայմանավորվածություն է ձեռք բերվել խորացնել կապերը և ակտիվացնել համագործակցությունը՝ ի նպաստ Արցախի կրթական համակարգի բազմակողմանի զարգացման:

ՃԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱՆԱՍԱԿՐ

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ՝ ՏԵՍՈՒԹՅԱՄԲ, ՄԵԹՈԴՆԵՐՈՎ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ

«Լուսարարի» նախորդ համարում տեղեկացրել էինք ռուսաստանաբնակ հայտնի թեստաբան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մեր հայրենակից Վաղին Ավանեսովի մասին, որը ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանի հրավերով Ստեփանակերտում շուրջ 150 ուսուցիչների համար անցկացրեց վերապատրաստման դասընթացներ 5 օր առկա և 5 օր՝ հեռավար ձևով: Մենք խոստացել էինք այդ մասին ավելի համառոտաբանելիս պատմել, թեպետ, խոստովանեց, դժվար է մտնել այն աշխարհը, որը Վաղին Ավանեսովն է առաջարկում, քանի որ ինչպես ինքն է ասում, այն ամենը, ինչ գալիս է ուրիշ աշխարհից, մեզ հասկանալի չէ, բայց մենք կօգտենք հասկանալ:

Իսկ մինչ այդ ծանոթանանք Վաղին Սերգեևիչի Ավանեսով գիտնականի հետ, որին շատ երկրներում են ճանաչում որպես գիտելիքների չափումների գիտության՝ թեստաբանության հիմնադիր, իսկ մեզ մոտ՝ Արցախում բախտ ունեցանք ճանաչել միայն վերջերս: Եվ ահա թե ինչպես դա տեղի ունեցավ:

ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանի հետ ամեն անգամ երբ հարցազրույց էինք անում և արժարժու էինք թեստերի թեման, նա միշտ ասում էր, որ թեստաբանությունը բարդ գիտություն է, մենք թեստաբաններ չունենք, անհրաժեշտ է Արցախի պետական համալսարանում բացել նման բաժին, ու ավելացնում էր՝ Ռուսաստանում ապրում է մի հայ թեստաբան, որի տեսությամբ առաջնորդվում են շատ երկրներ: Այ եթե հնարավոր լիներ նրան հրավիրել Արցախ, մոտիկից ծանոթանայինք, նա դասընթացներ անցկացներ այստեղ...

Իսկ Յուրի Քարամյանը նրա մասին առաջին անգամ լսել է 2007թ., երբ նշանակվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրեն: Այս ոլորտում նրա պրպտությունները հանգեցրել են այն համոզման, որ անհրաժեշտ է համապատասխան գրականություն ունենալ: Երևանում կայացած մանկավարժական մի հավաքի ժամանակ այս մասին երբ հարցրել էր լիտվացի մասնագետ Պերկեթալկին, նա մի գրականություն էր առաջարկել իրեն:

Երբ ծանոթացա, նա, տես, որ այնտեղ բոլոր հղումներն արված են պրոֆեսոր Ավանեսովին: Սկսեցի հետաքրքրվել, փնտրեցի համացանցում, գտա նրա հասցեն: Ամբիջապես նմանակ գրեցի: Նա էլ գրեց, որ այդ պահին ինքը գտնվում է Չեխոսլովակիայի Ծամոնո գյուղում: Ես այդ գյուղում լինում եմ, հարազատներ ունեմ այնտեղ: Նրանք իրենց զրույցներում միշտ ասում են, որ պրոֆեսոր ունեն: Դե ունեն՝ ունեն, Ղարաբաղի ո՞ր գյուղը չունի պրոֆեսոր, ու առանձնապես ուշադրություն չէի դարձնում նրանց խոսքերին: Եվ երբ արդեն իմացա, թե ով է այդ պրոֆեսորը, նրանց խնդրեցի փոխանցել նրա հեռախոսը: Տվեցին, կապվեցի նրա հետ, ու այդպես ծանոթացանք: Ես նրան ծանոթացրի մեր նախարարի, նա և ՀՀ կրթության և գիտության այն ժամանակվա փոխնախարարի հետ: Ես դեռ այն ժամանակ էի երգում նրան բերել այստեղ, որովհետև սկսել էինք թեստաբանություն, բայց պատրաստ չէինք: Փառք Աստծո, թեպետ ուշ, բայց ստացվեց: Հիմա պրոֆեսոր Ավանեսովը շատ հեռուն է գնացել: 2008թ. մենք ուրիշ բանի մասին էինք խոսում, 2019-ին՝ լրիվ ուրիշ բանի, հիմա ուրիշ մակարդակ է: Իհարկե, պետք է իմանալ բազան: Ես խնդրեցի սկսել ամենաբազային գիտելիքներին:

Իսկ Վաղին Ավանեսովն էլ պատմեց, որ իր ծնողներն են Ծամոնո գյուղից, որոնք մինչև հեղափոխություն են դուրս եկել գյուղից, գնացել Միջին Ասիա՝ Թուրքմենստան, Կրասնովոդսկ քաղաքը (այժմ կոչվում է Թուրքմենբաշի): Աշխատեցին, Տաշքենդում սովորելուց հետո մեկնել է Մոսկվա՝ ուսումը շարունակելու: Նրան թողել են ասպիրանտուրայում, հնարավորություն են տվել հետագայում աշխատել և այնտեղ ապրել: Իր կյանքի պատմությունը կարճ այսպես ներկայացրեց գիտնականը: Իսկ համացանցից տեղեկանում ենք, որ պրոֆեսոր Ավանեսովի հետաքրքրության ոլորտը հասարակական գիտությունների չափումներն են, ուսումնական տարբեր ծյուղերով գիտականորեն հիմնավորված թեստերի մշակումը: Թեստի ձևով առաջարկները մշակման և «մանկավարժական չափումների թեորիայի և մեթոդների հիմունքներ» ծրագրով բարձրագույն, միջին մասնագիտական, հանրակրթական հաստատություններին ավելի քան 14 հազար մանկավարժ է պատրաստել Ռուսաստանի, Հայաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Բելառուսի, Ուկրաինայի հանրապետություններում: Ներկայումս «Թեստային ձևերի օգտագործումը կրթական և առեստավորման մեր տեխնոլոգիաներում» սեփական դասընթացն է վարում արտերկրում: Երբ պրոֆեսորից ցանկացանք մի քիչ ավելի

տական, հանրակրթական հաստատությունների ավելի քան 14 հազար մանկավարժ է պատրաստել Ռուսաստանի, Հայաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Բելառուսի, Ուկրաինայի հանրապետություններում: Ներկայումս «Թեստային ձևերի օգտագործումը կրթական և առեստավորման մեր տեխնոլոգիաներում» սեփական դասընթացն է վարում արտերկրում: Երբ պրոֆեսորից ցանկացանք մի քիչ ավելի



տեղեկություններ իմանալ թեստաբանի իր ուղու մասին, նա ընդամենն այս ասաց. «Ռուսաստանում կրթության և գիտության նախարար կար՝ Վաղին Յագոդին: Մի օր նա իր օգնականին հարցրել էր՝ Արևմուտքում կիրառում են թեստեր, իսկ մեզ մոտ՝ ոչ չէ, ոչինչ չկա, հնարավոր չէ՞ մեզ մոտ էլ անել: Օգնականն ասել էր, որ ինքը գիտի այդպիսի մի մարդու: Նա գրավում է գիտական հիմունքներով թեստերի մշակմանը: Ես այդ ժամանակ այլ մասնագիտություն ունեի: Երբ սկսեցի աշխատել այդ մասնագիտությամբ, պետք եղավ դասընթաց պատրաստել: Եվ երբ սկսեցի պատրաստել, հասկացա, որ պետք է պատրաստեմ մեկ ուրիշ դասընթաց: Ես այդպես դուրս եկա հոգեբանական չափումների վրա (պսիխոմետրիկա): Դա արդեն ոչ թե կուրս է, այլ գիտություն: Պսիխոմետրիայից անցում կատարեցի մանկավարժական չափումներին: Սա էլ արդեն այլ գիտություն է: Այդպես պետք եղավ փնտրել այն գիտությունը՝ մանկավարժական չափումները, որն ինձ հարմար էր պրոֆեսորական դիպլոմի առումով: Այդ ուղղությունը ես եմ ստեղծել Ֆախլիկին նախարարի խնդրանքով»:

սովորաբար դա անում է ուսուցիչը, այլ փոքր բաժիններով, որևէ թեմայով, ինչ-որ ուղղությամբ, ենթաթեմայով, պարզաբանեց գիտնականը:

Արցախում այս գիտությունը մեր է, ոչ հայտնի: Մեր ուսուցիչները քանի տարի է՝ թեստային առաջարկներ են կատարում, բոլորս էլ դրանք անվանում ենք թեստեր, բայց իրականում դրանք թեստեր չեն: Թեստը բարդ երևույթ է, որը հասկանալու համար պետք է տիրապետել թեստոլոգիա գիտությանը, որի գիտական անվանումն է՝ մանկավարժական չափումներ: Թեստը մանկավարժական չափումների ձևերից մեկն է: Որպեսզի ուսուցիչն իմանա՝ դա թեստ է, թե թեստ չէ, պետք է անցնի դասընթաց մանկավարժական չափումներից՝ թեստաբանությունից:

Վերջին տարը տարում իր գիտական աշխատանքները Վաղին Ավանեսովը կատարել է Ծամոնոնում: Այնտեղ նա մի փոքրիկ տուն է կառուցել, որտեղ անց է կացնում ամռան մի քանի ամիսները: Բոլորի աչքից հեռու նա ստեղծում է իր տեսությունները, որոնք պահանջված են արտերկրում: Այնպես որ, կարող ենք հպարտորեն ասել, որ Արցախի օդը, ջուրը նպաստել են թեստաբանության զարգացմանը:



Դասընթացին, ինչպես արդեն ասացինք, ուսուցիչներին տրվեցին նախնական գիտելիքներ թեստաբանությունից, թեստի մասին ընդհանուր գիտելիքներ, ինչպես գրել քվանտավորված տեքստեր: Նա բերեց դասական գրականությունից օրինակներ:

«Յուրաքանչյուր դասի, թեմայի վերաբերյալ ուսուցիչը առաջարկներ են տալիս թեստի ձևով», - բացատրում է թեստաբանը: «Ես միշտ ասել եմ, որ թեստը առաջարկներ են տեղադրվածն է», - գիտնականի միտքը շարունակեց Յու. Քարամյանը:

«Ես առաջին ընթացիկներից ուսուցիչներին ասացի՝ ինչ որ լսեք և տեսնեք, պետք է օգնեն ձեզ գրելու մեր մանկավարժական ստեղծագործություններ՝ քվանտային ուսումնական տեքստ այն ճյուղով, որը դուք դասավանդում եք: Եվ այնտեղ կլինեն թեստի ձևով առաջարկներ, որպեսզի աշակերտը կարողանա կարգա և հասկանա, թե ինչն է մասին: Որպեսզի նա հասկանա և ուսումնասիրի այնտեղ գրվածը և հետո կարողանա ինքն իրեն ստուգել՝ յուրացնելով այն բոլոր գիտելիքները, որ այդ քվանտավորված ուսումնական տեքստում կան», - շարունակեց Վ. Ավանեսովը:

Քվանտավորել՝ նշանակում է տեքստը հիմնական մասերի բաժանել, փոքր մասերի, մեծ տեքստից վերցնել կարևոր մասերը:

Այնուհետև քայլ առ քայլ նա բացատրեց ինչպես մասերի բաժանել տեքստը, դրանց հիման վրա կարճ բառերով թեստային առաջարկներ կազմել: Նա ուշադրություն է դարձնում ամեն փոքր բանի վրա: «Մանկավարժության մեջ մանրուքներ չկան». սա նրա սկզբունքներից մեկն է: Չըզ շատ կարևոր է, պետք է ուշադրություն դարձնել տառատեսակի, ստորագրի արանքի չափերին, բառերի՝ էջի աջ ու ձախ մասերից հեռացվածությանը և այլն: Դրանք առաջին պահից պետք է աչքի զարնեն և աշակերտի վրա տպավորություն թողնեն:

«Մեզ մոտ հարթաճանաչում են ուսուցման սկզբունքները, երբ ուսուցիչը դասը վարում է, ուսուցանում: Բայց աշխարհում այսօր այդպես չի աշխատում: Աշխարհում այսօր առաջ է տանում ուսումնասիրման (ինքնուսուցման) սկզբունքները», - բացատրեց նա:

Ուսուցանում՝ երբ ուսուցիչն է սովորեցնում, ինքնուսուցում՝ երբ աշակերտը ինքն է ուսումնասիրելով յուրացնում: Այս թեորիան Ռուսաստանում չի եղել, Վ. Ավանեսովն է ստեղծել:

«Աշակերտներին ինքնուսուցման՝ յուրացնելով սովորելու համար մյուսեր են պետք: Այդ դեպքում ինչ սովորում է, ամբողջ կյանքի համար է: Ուզբեկական ասացվածքն ասում է՝ այն, ինչ երեխան ընդունում է մոր կաթի հետ, դուրս է գալիս նրանից հոգու հետ միասին», - ասում է Վ. Ավանեսովը: Եթե աշակերտը կրտսեր դարուցում լավ սովորի ուսուցչի կողմից գրված լավ տեքստերով, նշանակում է՝ նա առաջին քվանտային տեքստը յուրացրել է: Մենք այսօր Արցախում պատրաստում ենք քվանտային տեքստեր ստեղծողների առաջին ջոկատը, նրանց, ովքեր կարողանում են ոչ միայն պատմել, այլև գրել մեր մանկավարժական ստեղծագործություններ քվանտային տեքստերով՝ թեստի ձևով առաջարկներով»:

Դա մեր հասկացողությամբ թեստը չէ: Թեստը համակարգ է, մի ուրիշ աշխարհ է: Թեստը սկսվում է թեստի ձևով առաջարկներից: Հետո պետք է կլինի վիճակագրորեն ստուգել՝ այդ առաջարկները հարմա՞ր են թեստի համար, թե՞ ոչ: Դրանց կետը դուրս կթողնվեն որպես ոչ պիտանի առաջարկներ, քանի որ մաթեմատիկորեն, վիճակագրորեն ստուգելուց հետո կպարզվի, որ դրանք թեստային չեն:

Փաստորեն դասընթացին Վ. Ավանեսովը ուսուցիչներին սովորեցրեց գրել առաջարկները թեստի ձևով: Նրանք սովորեցին գրել ուսումնական քվանտային տեքստեր և թեստի ձևով առաջարկներ, որոնք պիտանի են էլեկտրոնային ուսուցման և էլեկտրոնային ուսումնասիրման՝ ինքնուսուցման համար:

Այդ հինգ օրերին յուրաքանչյուր օրվա երկրորդ մասը հատկացված էր Վաղին Սերգեևիչի օգնությամբ ուսուցիչների ինքնուսուցմանը: Նրանք հաջորդ ինչ-որ օրվա ընթացքում, երբ թեստաբանն արդեն գնացած կլինի, իրենց գրածները պետք է ուղարկեին նրան՝ ստուգելու և դասընթացը շարունակելու էլեկտրոնային ուսուցման ձևով:

«Մեկընդմիջ տեքստ է վերջ տրվի «գուրդիտին» և անցում կատարվի դեպի կոդիտիվ (ինքնացական) ուսուցմանը և կոդիտիվ ստուգմանը: Մի՞ չէ, երբ ասում են՝ դու լավ ուսուցիչ ես, թո աշակերտները պետք է ամեն ինչ իմանան: Երեխաներն ամեն ինչ չեն իմանում, դրա համար դարձրեցի (ինչն է՝ նաև բուհական) ուսուցումը պետք է բաժանվի նվազագույնը երկու մասի: Ուսումնական օրվա առաջին մասում ուսուցիչը սովորեցնում է, դրա համար անհրաժեշտ են քվանտավորված մեր տեքստեր, որոնք աշակերտը կարող է օգտագործել օրվա երկրորդ մասում՝ դարձյալ դպրոցում: Ուսումնական օրվա երկրորդ մասում ուսուցչի ղեկավարությամբ աշակերտն ուսումնասիրում է ինքնուսուցվում է: Ես չեմ վախենում ասել. ով չունի նման բան, նշանակում է ուսումնական գործընթացը ոչ ճիշտ, ոչ ժամանակակից ձևով է կազմակերպում», - ասում է գիտնականը: Հավանաբար մեր ուսուցիչների մտքով ամբիջապես կանցնի «երկարօրյա» հասկացությունը: Մենք էլ այդպես կարծեցինք: Բայց թեստաբանն ասաց. «Խնդրում եմ դա չօգտագործեք: Դա նույն բանն է: Դա ուսումնական գործընթացի կազմակերպման մեկ այլ ձև է: Իսկ մեր ասածը մեր ուսուցման համակարգ է՝ ավելացրած ինքնուսուցման աշխատանքը»:

Դասընթացի ավարտին Վ. Ավանեսովը նախարար Ն. Աղաբալյանի հետ նույնպես խոսել է լրիվ ուսումնական օրվա անհրաժեշտության մասին՝ ասելով, որ դա ապացուցված է միջազգային փորձով: «Եթե այդպիսի դպրոց ունենաք, այն մեթոդները, որ ես բերել եմ, կաշխատեն: Իսկ եթե չլինի, կարող է՝ չաշխատեն»:

Ուսուցիչները պետք է աշխատեն օրվա երկրորդ մասում և վարձատրվեն կրկնակի: Իհարկե, դա պարզ խնդիր չէ, դա նշանակում է լրացուցիչ 10 մլրդ գումար, ինչը մեր փոքր երկրի համար մեծ ծախս է: Բայց պրոֆեսոր Ավանեսովի համոզմամբ՝ փոքր լինելը տվյալ պարագայում մեր երկրի առավելությունն է, քանի որ ավելի հեշտ է արժատակյան փոփոխություն կատարել: Կարևորը ցանկությունն է:

«Շատ հովանավորներ ունենք, որ օգնում են դպրոցին: Նրանք կարող են նաև ուսումնական գործընթացի կազմակերպման համար միջոցներ հատկացնել»: Ահա այսպիսի տեսական և գործնական պատասխան տվեց պրոֆեսոր Վաղին Ավանեսովը՝ բոլորին առաջարկելով մտածել այս ուղղությամբ:

ԼԵՈՆԻԴ ԱԶԳԱԼԴՅԱԼ-77

ԳԱՐԵԳԻՆ ՆՇՂԵՆԻ ՄԵՑ ՀՈԳԵՉԱՎԱԿԸ



Լեոնիդ Նշղենի, դու մեծ հայրորդի Երևանում, ՊՈԱԿի ղեկավար, ՈՂՆԻՆԻ հերոս դու մեր պատմության, Ն ժողովրդի կանչով դու ելած մարտի, Ի սթաբիլիտետ անգամ կողոպտելով, Դ ավազակի գնդակի դու մեծ նահատակ, 7 դար էլ անցնի քո գործն անմահ է, 7 հազար դար էլ դու չես մոռացվի:

«Կան գերագույն պահեր և ժողովրդի գոյությանն ու ճակատագրին սպառնացող արտաքին վտանգի ժամեր, երբ իրենց դիրքերի վրա վտանգի պահին մնում են զորավորները միայն: Նման վարկյաններին ժողովուրդը գործողների մեջ փնտրում է ամենագորավորին և նրա փոխ մեջ դնում իր ճակատագիրը: Այդպես է աշխարհի գալիս ճշմարիտ առաջնորդը»: Դեռևս 1930-ականներին գրված Գարեգին Նժդեհի այս տողերը լավագույնս են բնութագրում Լեոնիդ Ազգալոյանի անձն ու երևույթը: Մարդու, ով իր գործով ու ճակատագրով վերստին ապացուցեց, որ հայ ազգն իր հարատև գոյության համար պարտական է միայն ու միայն պատմությանը ձեռնոց նետած ճշմարիտ առաջնորդներին: Հիրավի՜ նրանց առաքելությանն անմահ է խենթություն, քանզի հուսաբեկության ու համատարած սարսափի պահերին նրանք հանդգնում են հավատալ հաղթանակին, նրանք պարտադրում են իրենց հավատը յուրայիններին և ապա վերջին ու ամենակարևոր դաս ինքնագոհության սրբասուրբ արարքն իրագործելով՝ ստիպում են հավատալ, որ չկա մարդու համար առավել բանի բան, քան ազգն ու հայրենիքը:

Լեոնիդ Ազգալոյանը ազգային-ազատագրական պայքարի այն մարտիկն էր, որ Արցախը, ՀՀ-ն ու Արևմտահայաստանը իրարից չէր տարբերում, համարում էր մեկ միասնական ամբողջական հայրենիք: Նրա կյանքը վառ ապացույց է սպարապետ Գարեգին Նժդեհի հետևյալ խոսքերի. «Ազգերն ապրում են, քանի դեռ նրանց մեջ ապրում է երկու բան. պայքարի իմաստուն բնագործ և զոհաբերելու ներքին հոժարությունը»:

Լեոնիդ Ազգալոյանը մեր ազատագրական պայքարի գաղափարական ջահակիրն ու առաջամարտիկն է, մեր ազգի հավաքական կամքի ու անպարտելի ոգու դրսևորումը: Նրա կռիվը հայ ժողովրդի հազարամյա կռիվն է հանուն իր ոտնահարված իրավունքների վերականգնման, հանուն պատմական արդարության վերահաստատման: Նրա արդար կռիվը շարունակվում է, և այդ կռիվում մեզ գորավիզ է մեր բոլոր նվիրյալների հաղթական ոգին, մեզ գորավիզ է նա՝ լեգենդար Ազգալոյանը:

Մահը շատ ուշացավ Լեոնիդ Ազգալոյանի պարագայում կամ միգուցե շատ շտապեց, որպեսզի նրանից խլեր անմահությունը: Մահը նույնպես հասկացավ, որ պարտվեց, որպեսզի խլեր նրանից անմահությունը: Եվ Լեոնիդը անմահ է, քանզի նա ժողովրդից սիրված հերոսն է:

Լեոնիդ Ազգալոյանի անձն ու երևույթը իմաստավորելիս անհնար է չհիշել Նժդեհի տողերը. «Նահատակները՝ մեծ մեռելները, ամենից քիչ իրենց կուսակցության կապտկանեն, այլ կպատկանեն ամբողջ իրենց ցեղին ու պատմությանը: Չկան կուսակցական գոհեր, նահատակներ ու հերոսներ, կա ու կմնա ազգային մարտիրոսությունը և հերոսականը»:

Երիցս ճիշտ էր Նժդեհը իր այս հավատամք մեջ, քանզի Ազգալոյանը այդ ճշմարտության մարմնացումներից մեկը դարձավ:

Լեոնիդ Ազգալոյանը մեր ազատագրական

պայքարի գաղափարական գահակիրն ու առաջամարտիկն էր, մեր ազգի հավաքական կամքի ու անպարտելի ոգու դրսևորումը, նրա կռիվը հայ ժողովրդի 1000 – ամյա կռիվն է հանուն իր ոտնահարված իրավունքների վերականգնման, հանուն պատմական արտադրության վերահաստատման: Նրա արդար կռիվը շարունակվում է, և այդ կռիվում մեզ գորավիզ է մեր բոլոր նվիրյալների հաղթական ոգին, մեզ գորավիզ է նա՞ լեգենդար Ազգալոյանը:

Պատերազմը հերոսներ չի ծնում: Հերոսները կան ապրում են նաև առանց պատերազմի ու հերոսանուն են աննկատ, իսկ մենք դա չենք նկատում: Պարզապես պատերազմը դառնում է հերոսության բեմ, կեղծն ու իրականը զատելու միջոց, մեծ հավատաբեկություն, որ պոկում է բոլոր դիմակները: մեր աչքերի համար անտեսանելի, մեր մտքի համար անբացահայտ:

Նա հերոս էր նաև պատերազմից առաջ: Դա նրա կերպն էր, տեսակը, ձևը, բնատուր և անսակարկելի: Բայց քչերն էին ունակ տեսնելու դեպի բարձունք տանող ճանապարհի սկիզբն ու վեհաշունչ գալիքի թաքնված խորհուրդը նույնիսկ սովորական թվացող օրերում:

Անկախության համար շարժման և Արցախյան հերոսամարտի առաջին իսկ օրերից ներգրավվելով պայքարի մեջ և դառնալով այդ պայքարի առաջնորդներից մեկը՝ նա այդպես էլ չպատվեց իր անձը ոչ մի կուսակցության, չհարեց ոչ մի քաղաքական գաղափարախոսության և ոչ մի հոսանքի, շատերի պես չպարպեց իր ժամանակն ու միտքը դատարկախոս ժողովներ, անիմաստ բանավեճերի, միտինգային ճռնած էլույթների վրա, այլ ողջ ուժն ու կարողությունները ծառայեցրեց միայն մեկ գործնական նպատակի՝ հայրենիքի համար ազատագրության կռիվին:

«Սա Հայաստանն է և վերջ», - ասում էր նա, և այս պարզունակ թվացող բառակապակցության մեջ է տեղավորվում նրա դավանած բացառիկ արժեքը, նրա կյանքի ողջ փիլիսոփայությունը, նրա ոգու միակ հոգսն ու մտորումը: Քիչ խոսքեր և միայն գործ, ամենօրյա գործ, գոր ու գիշեր գործ՝ հանուն Հայաստանի. այս էին նրա պահանջն ու պատգամը գինակիցներին, որոնց հանդիպումը Լեոնիդի հետ շրջադարձային եղավ նրանց կյանքում ու ստիպեց ապրել իսկական վերածնունդ, հոգու և մտքի վերապրում, որի մեծագույն արգասիքը դարձավ հայրենիքի երանությանը մարտիրոսանալու պատրաստականությունը:

Ազգալոյանն ի սկզբանե երբ տեսավ միտինգները, հասկացավ, որ դա կուրծք ծեծողների հրապարակ է, հեռացավ այդ հարթակից: Իր մի քանի գիտնական ընկերների հետ նախաձեռնեց ինքնաշեն գեներ պատրաստելու գործը: Քիչ էր ասել, թե ֆիզիկոսի մասնագիտությունը այդ գործում օգտակար եղավ նրան: Համախոհների ու գինակից ընկերների շրջանակն ընդլայնելու համար նա կոչ էր արել Հայաստանի մտավորականությանը միանալ իրենց սկսած գործին և գլխավորել ժողովրդական պայքարը, սակայն ի գարմանս իրեն, արծազանքներ քիչ եղան: Հետագայում նա դառնություն բազմիցս կրկնելու էր. «Մեր ազգի մտավորականությունը հիմնադրվում ցածր ոգու տեր մարդիկ են, մարտնչելու ձևն ու վիճակը չգիտեն... Այստեղ փաստորեն ֆորպոստն է մեր ազգի՝ Գետաշեն, Շահումյան, Արցախ, մնացած վայրերը, Ջանգեզուրը. դրանք գտնվում են անմիջապես ոչնչացման վտանգի տակ»: Սա մեղադրանք չէր՝ ուղղված ուրիշներին, այլ ավելի շատ ինքնաքննադատություն, անկեղծ մարդու խոստովանանք, ով կսկիծ ու ցավ էր ապրում յուրայինների դրսևորած անտարբերության ու վախկոտության համար, և սակայն արծազանքողներ թեկուզ քիչ եղան, բայց և այնպես նրանք լավագույններն էին, գաղափարի նվիրյալներ, ուժեղ կամքի, հզոր ոգու տեր մարդիկ, մի բուռ ընտրյալներ, որոնց Ազգալոյանն իր վաղեմի իղձն ի կատար ածելով՝ հպարտությամբ կոչել է բանակ:

1990թ. Ազգալոյանը Աշոտ Նավասարդյանի հետ հիմնեց «Անկախության բանակ» կառույցը, սակայն քաջ գիտակցում էր, որ գինված մարդկանց խումբը դեռևս գործ չէ, ոչ էլ առավել և՛ բանակ, իսկ նման կերպ կոչվելու իրավունքը կարելի է վաստակել միայն խա-

տագույն կարգապահություն պահպանելու, ռազմարվեստի բոլոր նրբություններին տիրապետելու և ամենակարևորը՝ գաղափարապես թրծված լինելու պարագայում: Այդ համալիր խնդիրների լուծման մեծագույն պատասխանատվությունը պետք է կրեր ինքը:

Ազգալոյանի ջոկատում ընդգրկվում էին ընտրյալները, որոնք պետք է լինեին անսահման հայրենասեր, խիստ կարգապահ, ծիսելն ու խմելը բացառվում էր, իսկ եթե մեկն ասում էր՝ եկել են Արցախի համար գոհվելու, ջոկատում նա տեղ չունեցր: Նրա ջոկատի տղերքը պետք է լինեին Արցախի համար կռվող ու հաղթողները:

Ազգալոյանը երբեք չդարձավ որևէ կուսակցության անդամ և օտարերկրյա լրագրողի հարցին ի պատասխան, թե ինչ գույնի եք դուք, այսինքն՝ ինչ կուսակցությունից եք, նա ծնկաչոք մի բուռ հող է վերցրել և ասել. «Ահա իմ գույնը, դա է իմ կուսակցությունը, հայ գինվորը չպետք է կուսակցություն ունենա»: Նժդեհն ասում էր. «Հերոսին հնարավոր չէ պարփակել մի կուսակցության մեջ, նա ազգի արժեք է, նա ազգի գինվոր է»:

1991թ. ֆրանսահայ ազատամարտիկ Յուլիետի Յուլիետի հետ նա հիմնեց «Ազատագրական բանակ» ռազմական կառույցը: Հենց այդ կազմակերպության շարքային գինվորների թվից էին դուրս գալու հայոց կանոնավոր բանակի բարձրագույն շատ սպաներ, որոնցից շատերը մինչ օրս Լեոնիդ Ազգալոյանին համարում են իրենց հոգեհայրը, ուսուցիչն ու հրամանատարը:

Ազգալոյանը հայոց պատմության մեջ մտավ որպես առասպել ու առեղծված, որի խոսքն անհնար էր գետնով տալ, ուն առաջադրանքը կատարելը պատվի գործ էր, իսկ կարողությունը շահն էր՝ ազգի ու հայրենիքի հետադարձ արժանապատիվ գոյության: Ազգալոյանն հրամանատարը ստեղծեց մի բանակ, որն իր կարգ ու կանոնով, կազմակերպվածությամբ, հրամաններն անթերի կատարելու պատրաստակամությամբ, մարզվածությամբ ու ռազմական գործի գրագետ իմացությամբ օրինակելի էր ու պատմական:

«Ձուկվելու պատրաստ գինվորները ամենաթանկագինն են, ինչ մենք ունենք», - ասում էր Ազգալոյանը, և երբեք չի կարելի ռոճալել նրանց մայր. սա էր ռազմական գործիչի ու հրամանատար փիլիսոփայի գերագույն բանաձևը: Նա մտավորական էր, որ շալակեց գեները և գնաց մարտի: Նա գիտեր, որ միայն գեներով չեն պահում ազգը, գեներն համազոր և նույնչափ կարևոր մտքի լույսն է, գիտության ջախը, որ պահում է ազգը: Նա հավատում էր, որ բոլոր ջոկատների ներքին միության և միասնության մեջ է հաղթանակի սերունդը:

Վարդենիս, Շահումյան, Մարտակերտ, Հարդուբ, Մարտակերտ, Տող... Սա է Լեոնիդ Ազգալոյանի հիմնած Ազատագրական բանակի հիմնական ուղին, 27 ազատագրված գյուղ, հարյուրավոր մեծ ու փոքր մարտեր:

Հայկական կանոնավոր բանակը նրա իղձերի գազաթն էր, նրա երազանքը, թերևս հենց այդ էր պատճառը, որ իր ստեղծած փոքրաթիվ զորախումբը նա չէր կոչել ջոկատ, այլ կնքել էր բանակ անունով: Ըստ էության իսկական բանակին նրա գինվորները զիջում էին միայն թվաքանակով և սպասազինությամբ, սակայն նրանց ոգին, նվիրումն ու արհուրթունքը կերպարը ունենալ աշխարհի ցանկացած բանակ, և ցանկացած բանակ էլ իր հերթին երջանիկ պիտի զգար՝ ունենալով Լեոնիդ Ազգալոյանի պես համաճարեղ գեներալի, ով իրականում լեյտենանտի ուսադիրներ էլ չունեցր:

Տարված լինելով ազգային գաղափարներով՝ նա այդպես էլ չհասցրեց ընտանիք կազմել՝ հաստատելով Նժդեհի մեկ այլ խոսք. «Աստվածների և գերմարդկանց ճակատագիրն է լինել մեռակ»:

Երբ 2,5 հազարանոց ռազմապարսկական բազմահազարանոց բանակը մահ ու ավեր սփռելով շարժվում էր դեպի Հունաստանի սիրտը, Թերմոպիլե կոչվող կիրճում նրան դեմ- հանդիման դուրս եկան 300 սպարտացիները՝ իրենց քաջ առաջնորդ Լեոնիդի գլխատրությամբ, որի անունը հունարեն առում է նշանակում: Կարող էին պարսիկները ենթադրել, որ իր մի բուռ խենթերին առաջնորդելով՝ այդ մարդը կարող էր կանգնեցնել իրենց առաջխաղացումը: Ոչ, բայց նա արեց դա,

արեց անհնարինը իր և իր սպարտացիների նահատակության գնով:

Չարմանալի գուգադիպությամբ 2,5 հազարամյակ անց սպարտական ոգով դաստիարակված իր 300 գինվորների գլուխն անցած՝ նույն արարքը պիտի կրկնեի Լեոնիդ Ազգալոյանը հայոց Թերմոպիլեում՝ Արցախում՝ կտրելով մահ ու ավեր սփռող թշնամու առաջխաղացումը դեպի իր հայրենիքի սիրտը:

1992թ. հունիսի սկզբին արդրեջանական բանակի լայնածավալ հարձակման ժամանակ Մարտակերտի շրջանի Չայլու գյուղի մոտակայքում գոհվեց Ազգալոյանի ամենամտերին ընկերն ու գինակիցը՝ ազատագրական բանակի Արցախյան ճակատի հրամանատար, միջնադարյան քաջ ասպետի նման խիզախ ու վեհանձն մարտիկ Վլադիմիր Բալայանը: Նրա հուղարկավորության ժամանակ Ազգալոյանն ասաց. «Այն մակարդակը, որ ինքը ուներ, այդ մակարդակի մարդ ամեն ժողովուրդ ծնում է երկի 3-4 դարը մեկ...»:

Ականատեսների վկայությամբ Ազգալոյանը շուրջ 2 ժամ լուռ ու խոնարհ կանգնած մնաց իր ընկերոջ շիրմաքմբի առջև և արտաբերեց ներքին կանխազգացումի խոսքերը. «Մեկ է, ես չուտով գնալու եմ երկնքում հանդիպեմ Վլադիմիրին»:

Բացի հրամանատար լինելուց Լեոնիդ Ազգալոյանը և Վլադիմիր Բալայանը չդադարեցին գինվոր լինելուց, նախ նաև գինվոր էին, առաջավոր գինվոր էին: Նրանք մարտիկ էին և մարտը կղեկավարեին ոչ թե թիկունքից այլևս հենց գինվորի կողքին կանգնած և առաջինը իրենք կհայտնվեին այդ դիրքերում: Նրանք առաջամարտիկ էին, գինվոր, որ կանգնած է առաջնագծում, գինվոր հրամանատար, որ առաջ ինքն էր գնում և հետևից տանում գինվորներին, այսինքն նրանք մարտի դաշտում ամենակամ օրինակ էին հանդիսանում բոլորի համար, դրա համար մեծ սեր, հարգանք էին վայելում իրենց գինվորական ստորաբաժանումներում:

Լեոնիդ Ազգալոյանը գոհվեց Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի մոտակայքում 1992թ. հունիսի 21-ին իր ընկերոջ մահից ուղիղ 12 օր անց. այդպես իրականություն դարձավ սեփական նահատակության նրա մարգարեությունը:

Լեոնիդ Ազգալոյանի նահատակության առեղծվածը հյուսվեց նրա կյանքի ու անձի մեծ առեղծվածին՝ սերունդների համար դառնալով ասք ու առասպել առյուծանուն հերոսի մասին, ով սիրել է իր հայրենիքը իր կյանքից շատ, ով առաջինն է նետվել մարտադաշտ իր ժողովրդի համար օրհասական ժամին:

- Ոգին և ոչ թե գեներ է հաղթում պատերազմում, - ասել է Լեոնիդ Ազգալոյանը: - Ու նորից կգա ՆՈՐ ՀԱՅԸ: Այսօր, վաղը և ընդմիջտ...

2019թ. օգոստոսի 28-ին ԼՂՀ Մախազախի հրամանագրով պաշտպանության կազմակերպման գործում Արցախի Հանրապետությանը մատուցած բացառիկ ծառայությունների, ցուցաբերած քաջության ու անձնական արիության համար լեգենդար հրամանատարներ Լեոնիդ Ազգալոյանին ու Վլադիմիր Բալայանին հետմահու շնորհվել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչումը:

Այն մարդկանց, ուն առաջինների շարքում պիտի շնորհվել հերոսի կոչում, շնորհվել է վերջինը և ինչպես ասում են՝ ուշ է, բայց ոչ ուշացած: Ամենամեծ հերոսի կոչումը տալիս է ժողովուրդը, իսկ նրա տակ կնիքը դնում է ժամանակը:

Ապագա երախտապարտ սերունդները սիրով կհիշեն ժողովրդական հերոսներին, հայ եկեղեցին Լեոնիդ Ազգալոյանին ու Վլադիմիր Բալայանին կղասի սրբերի շարքը:

Լեոնիդ Ազգալոյանի ծնունդը, կյանքը, մահը և համբերումը եկան ապացուցելու սպարապետ Գարեգին Նժդեհի հետևյալ խոսքը.

«Հայրենիքն է շնորհում մարդուն հպարտանքներից ամենաարդարը, ցավերից ամենախորը, պաշտամունքներից ամենաանխառնը և մահերից ամենասուրբը»:

Ամենասուրբ մահով սրբացած սիրելի հրամանատար, ծնունդդ շնորհավոր:

Քեղամ ՄԻՋԱՅԵԼՅԱՆ
«Գրիգոր Նարեկացի» համալսարանի ՏՏ բնագիտական առարկաների դոցենտ, պահեստազորի գնդապետ

ԱՐՑԱՆՈՒՄ

ՄԱՐՏԻԿ - ՄԱՆԿԱՎԱՐԺ

Արմիկ Արամյանի ծննդյան 100-ամյակի առթիվ

Երբ մարդը լքում է այս աշխարհը, ասում ենք՝ գնաց մեկ ուրիշ աշխարհ: Իսկ այդ աշխարհը հենց մարդկանց հիշողությունն է: Ու եթե մարդը մնում է պարողների հիշողության մեջ, նշանակում է՝ նա ողջ է, մարդկանց մեջ է, քանի որ նրա արած գործերը, մտքերը փոխանցվում են սերունդներին:

Արմիկ Արամյանն արդեն ութ տարի է՝ լքել է այս աշխարհը, սակայն մարդկանց հիշողության մեջ ապրում է իր գործերով:

Նոյեմբերի 20-ին լրացավ Արցախի արժանավոր դատեր ծննդյան 100-ամյակը: Թերթենք կյանքի էջերը մի արցախուհու, որը հայրենիքին ծառայել է գրչով ու սրով:

Հայրենասիրությունն ու ազնվագարնությունը նրա մեջ նստած էին գեներոսի ժառանգությամբ: Հոր կողմից սերունդ է հայ մեծ բարերար Միքայել Արամյանի (հորեղբայրն է), մոր կողմից՝ Դանիել-բեկ և Պավել-բեկ Փիրոյանների (մոր հորեղբոր տղաներն են) տոհմից:

Հայրը՝ Նիկոլայ Արամյանը, որը Ֆրանսիայի Մոնպելե բաղաժույժ է ստացել բարձրագույն գյուղատնտեսական կրթություն, սկզբում գործուղվել է Էջմիածին՝ որպես վանքապատկան հողերի գյուղատնտես, իսկ 1930-ական թթ., երբ կոլտնտեսային շարժման ժամանակ վանքապատկան հողերն ազգայնացվեցին, ընտանիքով վերադարձավ Ղարաբաղ և բնակություն հաստատեց Ստեփանակերտում: Նշանակվեց ԼՂ գլխավոր գյուղատնտես: Այդ տարիներին մարդուն մեծ թափ ստացած խաղողագործության մեջ մեծ էր գյուղատնտես Ն. Արամյանի ներդրումը:

Արմիկ Արամյանը, հետևելով հորը, ուսումը շարունակեց Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: Այդ տարիներին այդտեղ հայոց լեզու և գրականություն էր դասավանդում բանաստեղծ Գրիգոր Ներսիսյանը (ազգային մտածողության, հայեցողության սերմանման համար նա դարձավ ստալինյան ռեժիմի գոհ), որի ազդեցությունն այնքան ուժեղ էր ուսանողների վրա, որ նրանցից շատերը հետագայում ընտրեցին հայոց լեզու և գրականություն մասնագիտությունը: Նրանցից էր և Արմիկ Արամյանը, որը դարձավ բարձրագույն կրթությամբ հայրենի ուսուցիչ: Սկզբում աշխատեց Շոշ գյուղում: Տեսնելով երիտասարդ աղջկա կազմակերպչական ունակությունները՝ մարզոժողովրդավար Սարգիս Արամյանը նրան հրավիրեց աշխատելու մարզոժողովրդավար կից մեթոդկաթնետուն՝ որպես մեթոդիստ:

Արդեն սկսվել էր Հայրենական պատերազմը: Թշնամին հասել էր Հյուսիսային Կովկաս: Հայրենիքը վտանգի մեջ էր: Արմիկ Արամյանը, որը նաև մարզային մակարդակի կոմերիտակտիվիստ էր, հանդես եկավ կամավորագրվելու ռազմաճակատ: Արմիկ Արամյանը երկու ամիս ավտովարորդի դասընթացներում սովորելուց հետո (1942թ.) մեկնեց ռազմաճակատի առաջավոր գիծ՝ որպես զինվորական ավտոտեսուչ ու այրպես՝ մինչև պատերազմի ավարտ, մինչև Բեռլին ու հաղթանակ:

Պատերազմի զարկերակը ճանապարհներն էին, որոնց անխափան աշխատանքի ապահովումը հանձնարարված էր նաև Արմիկին:

Նրա արիստիվում մենք գտանք մի փաստաթուղթ 1944թ. օգոստոսի 30-ի թվագրությամբ, որում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանն էր Ուկրաինական 1-ին ռազմաճակատի գործերին՝ գերմանացի զավթիչների դեմ մղված պայքարում ցուցաբերած արիության համար պարգևատրման մասին: Այդ ցուցակում Արմիկ Արամյանի անունն էլ կա, իսկ պարգևատրման թերթիկում համառոտ նկարագրված է այն սխրագործությունը, ինչի համար նա ստացել է կառավարական բարձր պարգև: Այնտեղ գրված է. «Սերժանտ Արմիկ Արամյանը կարմիր բանակում ծառայում է 1942 թվականից, ճանապարհային կարգավորման դիրքի պետն է: Նրա ղեկավարած դիրքը լավագույնն է: Նա իրեն դրսևորել է որպես գերազանց կազմակերպիչ՝ ապահովելով իրեն հատկացված երթուղային հատվածներում ռազմական տրանսպորտային միջոցների անխափան երթևեկությունը: Գարնանային ձյունահոսքերից ճամփափակման մեթոդների ընթացքում Ա. Արամյանը կարողացել է տեղի բնակությունից 150-200 քաղաքացի մոբիլիզացնել ճանապարհային աշխատանքներում ու հնտորեն կազմակերպել ռազմական փոխադրամիջոցների անխափան տեղաշարժերն անհրաժեշտ ուղղություններով: Միայն օգոստոսի 11-20-ը տվյալ տեղամասում նա ապահովել է 210

հազար մարտական և տրանսպորտային մեքենաների երթևեկությունը՝ բացառելով որևէ խցանում կամ վթար: Արմիկ Արամյանը մարտական և քաղաքական պատրաստության գերազանցիչ է: Նա միանգամայն արժանի է կառավարական բարձր պարգևի՝ «Մարտական ծառայությունների համար» մեդալի: 30 օգոստոսի, 1944թ.»:

Սա գործող բանակում 1942-1945թթ. Արմիկ Արամյանի երկար ու ծիգ օրերից ընդամենը ինժեռյա ծառայությունից դրված է: Այդպես նա Հյուսիսային Կովկասից մարտերով հասել է Բեռլին: Եվ դա էքսկուրսիա չէր, սարսափելի պատերազմ էր: Զոր ու զիշեր ինքնաթիռներով, հրանոթներով և զենքի այլ տեսակներով գնդակոծվում էին հանգուցային կետերը, ծնունտ սառնամանիքին սառեց լույսները կախվում էին օձիքից, գիշերները պահակակետում կանգնած՝ սապոզները սառչում, կաչում էին գետնին, իսկ նա դիրքում կանգնած՝ ճանապարհ էր բացում գործի համար: Չենք խորանում այս մանրամասնությունները, նրա վիրավորվելու, տրված արժանուրդը մինչև Ստեփանակերտ հասնելը ճանապարհներին ծախսելու վրա: Դա գեղարվեստական ֆիլմ է հիշեցնում: Միայն ասենք, որ նա այն երջանակներից է, որը Ռայխտագի վրա գրել է՝ «Ստեփանակերտ-Բեռլին, Արմիկ Արամյան»:



Պատերազմից հետո նրան սպասում էին սիրած աշխատանքն ու սիրած տղան՝ Ղարաբաղի լավագույն մաթեմատիկոսներից մեկը՝ Սուրեն Թամրազյանը: Երիտասարդ ամուսինների խաղաղ տարիների աշխատանքը ոչ պակաս հայրենասիրություն էր: Նրանց արդեն մանկավարժական աշխատանք էին առաջարկել Ստեփանակերտում, բայց տեղեկանալով, որ հնձրիստան գյուղի դպրոցը փակվելու վտանգի տակ է հայոց լեզվի և մաթեմատիկայի ուսուցիչներ չունենալու պատճառով, առանց վարանելու ընտրեցին այդ դպրոցը: Ու գնացին՝ իրենց համար ամենամոթ այդ գյուղը, որը դարձավ նրանց երկրորդ հայրենիքը: Նրանք շուրջ երկու տասնամյակ այդտեղ աշխատեցին և իրենց նպաստը բերեցին գյուղի զարգացմանը: Արմիկն աշխատեց որպես ուսուցիչ, ապա՝ ուսնասովոր, տնօրեն: Այդտեղ ծնվեցին նրանց երեք զավակները. ապագա մանկավարժներ՝ վաստակավոր ուսուցիչ Նաիրա Թամրազյանը և նրա երկու եղբայրները՝ Գրիգորն ու Նելսոնը (մեկը մաթեմատիկայի, մյուսը՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ):

Սուրեն Թամրազյանի՝ Ստեփանակերտի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում մաթեմատիկայի տեսուչ նշանակվելու կապակցությամբ նրանք վերադարձան քաղաք: Արմիկ Արամյանն աշխատեց երևոյան դպրոցում, ապա մինչև թոշակի անցնելը՝ հ. 8 դպրոցում: Վաստակած հանգստի անցնելուց հետո էլ վերաբան-մանկավարժը շարունակեց ակտիվ կենսագիրը: Վաստակաշատ մանկավարժը դպրոցում սպասված հյուր էր, որտեղ մատաղ սերնդի հետ կիսվում էր պատերազմական հուշերով: Նրա հետ յուրաքանչյուր հանդիպում հայրենասիրության մի բաց դաս էր: Հայրենասեր արցախուհին մինչև իր կյանքի վերջը, մինչև ապրած 92 տարիները մնաց

Շնորհավորանք ԱՄԱԵՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ, ՆՎԻՐՈՒՄՈՎ



Է Լ Մ Ի ր ա Հարությունյան: Ուսուցչուհի, որի աշխատասիրությունն ու պատասխանատվությունը գործունեություն էր ու շ ա դ ու թ յ ա ն կ ե ն տր ո ն ու մ են և ա ջ ջ են շ յ ու մ: Ն ա մ ի շ տ զ բ աղ վ ած է. զ լ ու խ ը

խոնարհած իր սաների աշխատանքների վրա, ոգևորվում է նրանց հաջողություններով՝ հուզվում քրեկապի բոլորիս հետ: Անչափ զգայուն, նրբանկատ, համեստ ու միաժամանակ կենսախիղճ անձնավորություն է:

Ծնվել է 1959թ. նոյեմբերի 21-ին Քյաթուկ գյուղի բազմազավակ ընտանիքում: Երկու եղբայրներն ու չորս քույրերը միմյանց նկատմամբ առանձնահատուկ հոգատարություն էին ցուցաբերում, որը շարունակվում է մինչև օրս: Լինելով բազմանդամ ընտանիքի դուստր՝ Էլմիրա Հարությունյանը միշտ ձգտել է ամեն ինչի հասնել ինքնուրույն, սեփական ուժերով՝ անհանգստություն չպատճառելով ոչ մեկին:

1977թ. ավարտելով միջնակարգ դպրոցը՝ նույն թվականին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Քիմիա և կենսաբանություն» բաժինը: Ինստիտուտում ավարտելուց հետո աշխատանքի է մտել Ասկերանի շրջանի գյուղբաժնում՝ որպես տնտեսագետ: 1990թ. սեպտեմբերի 1-ից Էլմիրա Հարությունյանն իր աշխատանքային գործունեությունն է սկսում Ասկերանի միջնակարգ դպրոցում:

Երբ փոթորկվեց Արցախյան պատերազմը, Էլմիրա Հարությունյանը 1992թ. սեպտեմբերի 1-ին տեղափոխվեց Ասկերանի շրջանի Մեհտիշենի ոչ լրիվ միջնակարգ դպրոց և աշխատում է որպես քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի: 1993թ. սեպտեմբերի 1-ից նորից տեղափոխվում է Ասկերանի միջնակարգ դպրոց, որտեղ էլ առ այսօր աշխատում է մեծ նվիրվածությամբ և պատասխանատվությամբ:

Ուսուցչի վեհ առաքելությունը Էլմիրա Հարությունյանը կրում է ամենայն պատասխանատվությամբ՝ անմնացորդ նվիրվելով սաների կրթության և դաստիարակության գործին:

Լինելով հրաշալի ուսուցչուհի և մասնագետ՝ նաև հոգատար ընկեր է, մարդկային բարձր որակներով օժտված մարդ: Կոլեկտիվի բոլոր անդամների հանդեպ բարյացակամ և սիրալիկ վերաբերմունքը հիմք են հանդիսացել, որ նրա հանդեպ սերն ու ջերմությունը օրեցօր աճեն և վերածվեն փոխադարձ կապվածության ու մեծ ընկերության: Նրա հոգու ջերմությունը այնքան անսահման է, որ բավարարում է թե՛ ընտանիքի, թե՛ կոլեկտիվի անդամներին:

Էլմիրա Հարությունյանը հրաշալի և գեղեցիկ ընտանիքի մայր է, հարս և տատիկ: Նրա երկու զավակները՝ Արտակը և Անահիտը, ծյուղավորվել և գեղեցիկ ընտանիքներ կազմելով՝ տատիկին ու պապիկին նվիրել են հինգ կենսախիղճ թոռնիկներ՝ նրանց կյանքը դարձնելով գունեղ ու հեթիաթային:

Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ հոսքային շնորհավորում է Էլմիրա Հարությունյանին 60-ամյա հոբելյանի առթիվ, ցանկանում նրան առողջություն, հաջողություն և խաղաղություն: Թող երկնքի բոլոր բարի հրեշտակները հովանի լինեն Ձեզ և Ձեր հրաշալի ընտանիքին:

Բարին ընդ Ձեզ:

Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի կոլեկտիվ

Ս. ԽԱԶՍՐՅԱՆ

ՍԱՐՁԱԿԱՆ

ՉԵՄՊԻՈՆՆԵ՝ ՏԻՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ



Ծնվել է - հոկտեմբերի 21, 1992թ.: Մարզածերը - ավանդական կարատե-դո: Սկսել է պարապել - 3 տարեկան էր, երբ հաճախում էր պարապմունքի, 6 տարեկանում հանձնեց առաջին բնութայինը: Կարգախոսը - «Ինքնաճանաչում, ինքնազարգացում»: Չեմպեոնները սպորտում - 2019թ. ավանդական կարատե-դո

Եվրոպայի առաջնության հաղթող, 2013թ. ավանդական կարատե-դո Եվրոպայի առաջնության 3-րդ տեղի մրցանակակիր, միջազգային մրցաշարերի բազմակի մրցանակակիր, 33 բազմակի չեմպիոն տարբեր մրցաձևերով: Մասնագիտությունն ու աշխատանքը - «Գրիգոր Լարեյկացի» համալսարանի ֆիզկուլտուրա բաժնի 2-րդ կուրսի ուսանող, Ասկերանի ՄՊՄԴ-ի կարատեի մարզիչ, Արցախի ավանդական կարատե-դո ֆեդերացիայի մարզիչ: Սիրում է զբաղվել - մարտարվեստով, քանդակագործությամբ: Կյանքում ամենից շատ սիրժեւորում է - ընտանիքը: Մարզիկը պետք է լինի - աշխատասեր, նպատակասլաց, ինչը զրկում է ազատ ժամանակից, բայց տալիս է արդյունք: Նրա համար օրինակելի մարզիկները - կարատեի վարպետները, որոնք նույնիսկ մեծահասակ ժամանակ գտնվում են ֆիզիկական եւ մտավոր գերազանց վիճակում, ինչն արտահայտվում է նրանց կողմից անցկացվող սեմինարների ժամանակ եւ առհասարակ կյանքում: Ընտանեկան կարգավիճակը - ամուսնացած է, ունի դուստր:

Առաջիկա ծրագրերն ու նպատակը - բացի 33 միջազգային առաջնությունից մասնակցել երկրից դուրս կայանալիք միջազգային մրցումների, նախապատրաստվել 2020թ. հոկտեմբերին Բրազիլիայում կայանալիք ավանդական կարատե-դո աշխարհի առաջնությանը: Վնասվածքը - 2017թ. Լորշեմում (Արցախ) կայացած մրցման ժամանակ ստացել է ուսի (անրակի հողախախտ) վնասվածք, որից հետո յոթ ամիս դադարեցրել է պարապմունքները մարզադահլիճում, բայց շարունակել է պայքարն իր ներսում: Հաղթահարելով բացասական հույզերը, թույլ տեղերն ու ցավը՝ վերականգնվել է եւ 8-րդ ամսում արդեն հաճախել պարապմունքի: Դրսեւորելով կամքի ուժ եւ նպատակասլացություն՝ հաղթահարել է հետվնասվածքային ծանր շրջանը եւ երեք ամիս ամենօրյա պարապմունքով ոչ միայն ապաքինվել է, այլեւ իր ֆիզիկական ցուցանիշները նորմայից բարձրացրել: 2018-ին մասնակցել է 33 միջազգային առաջնությանը եւ մրցանակային տեղ զբաղվել: Մտնեցումը - կարատեում, ինչպես կյանքում, ամեն քայլ կատարել գիտակցված: Ամեն պարապմունքի ճանաչել մարզիկի հոգեբանությունը, աստիճանաբար պատրաստել ֆիզիկական (մկաններ), տեխնիկական (ուղեղի եւ մկանների համատեղ աշխատանք), ուղղորդել ինքնաճանաչման (ճիշտ շնչառություն, ինքնակառավարում, բացասական հույզերի հաղթահարում): Ավանդական կարատե դո-մարզածելի Եվրոպայի 34-րդ առաջնությունը - հոկտեմբերի 7-14, 2019թ., ՌԴ Օդիսցովո քաղաք, մասնակից՝ 15 պետություն: Արցախից՝ 11 մարզիկ 33 կազմում (ընդհանուր՝ 45 մարզիկ): 6-7-ից մինչեւ 21+ տարիքային խմբերում 11 մարզիկներից 7-ը գրավեցին մրցանակային տեղեր անհատական մրցաձևերում: Թիմային կատա (մարտ սովերի հետ) մրցաձևում 16-17 տարիքային խմբում արժանագրեցին 2-րդ մրցանակային տեղ: Էմ-բու (մենամարտի տեխնիկա՝ ըստ նախապես պայմանավորվածության) մրցաձևում 16-17 տարիքային խմբում արժանագրվեց թիմային 3-րդ մրցանակային տեղ: 18-21 տարիքային խմբում էմ-բու մրցաձևում արժանագրվեց թիմային 3-րդ մրցանակային տեղ: 21+ (մեծահասակ)

տարիքային խմբում Արցախից երկու մարզիկ եւ 33-ից մեկ մարզիկ թիմային կումիտե (մենամարտ) մրցաձևում գրավեցին 3-րդ մրցանակային տեղ: Տիգրան Գևորգյանը՝ Եվրոպայի չեմպիոն - Հաղթանակի հասնելու ճանապարհին հաղթահարեց չորս շրջան, ընդ որում, ամենաբարդ մրցաձևը եւս՝ ֆուկու-գո (կատա եւ կումիտե մրցաձևերի համադրություն): 1-ին շրջանում մրցակցեց ՌԴ կումիտե մրցաձևի չեմպիոն ռուս մարզիկի հետ: 2-րդ շրջանում մրցակցեց էր 2010թ. ավանդական կարատե-դո աշխարհի առաջնության կումիտե մրցաձևում մրցանակակիր ուկրաինացի մարզիկը: 3-րդ շրջանում մենամարտեց 2016թ. աշխարհի չեմպիոն (ֆուկու-գո), կարատեի աշխարհում ճանաչված հայ մարզիկ Լարեյկ Իսկանդարյանի հետ, որին հաղթեց ֆուկու-գո բարդ մրցաձևում: 4-րդ շրջանում հաղթեց ռուս մրցակցին, որը կատա մրցաձևում ՌԴ չեմպիոն է: Այսպիսով, Տիգրան Գևորգյանը 21+ տարիքային խմբում հռչակվեց ավանդական կարատե դո Եվրոպայի 34-րդ առաջնության չեմպիոն:

ԱՅԿԻՊՈՆ ԱՐՑԱԽՈՒՄ




Գաղտնիք չէ, որ արեւելյան մարտարվեստները լայն տարածում ու մասսայականացում ունեն Արցախում: Հնարավոր է, որ արցախցիների անթաքույց սերը դեպի արեւելյան մարտարվեստներ պատահական չէ եւ պայմանավորված է նրանով, որ հնագույն մարտական այդ արվեստները ծնվել են օրհասական պահերի՝ կռվում, մշակվել ու հղկվել ժամանակի ընթացքում՝ դառնալով ինքնապաշտպանվելու եւ մարտնչելու արդյունավետ համակարգ: Որդեգրելով արեւելյան մարտարվեստների սկզբունքներն ու մարտական տեխնիկան՝ ուժեղ կամք ու բարձր մարտական ոգի ունեցող արցախցիներն իրականացնում են մեր երկրի համար ռազմավարական նշանակության քաղաքականություն՝ սպորտի միջոցով Արցախն աշխարհին ճանաչելի դարձնել, ունենալ կոփված ու մարտունակ բանակ, առողջ ու դիվանագետ սերունդ, հզոր երկիր: Արցախում գործող բազմաթիվ ֆեդերացիաների կողքին հայտնվեց նոր մարտարվեստի ֆեդերացիա, որն իր գործունեությունն սկսել է ամիս առաջ՝ հետամուտ լինելով վերոնշյալ նպատակին՝ ունենալ հզոր երկիր: Արցախի այլիպող այլիկայ ֆեդերացիայի հիմնադիր եւ մարզիչ Ռաֆայել ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ հետ հարցազրույցում պարզաբանեցինք այլիպող մարտարվեստի հետ կապված հարցեր եւ տեղեկացանք, որ ճապոնական այս մարտարվեստը կարող է շատ օգտակար լինել բոլոր նրանց համար, ովքեր հետեւում են առողջ ապրելակերպին, ֆիզիկական եւ հոգեպես կոփված լինելուն, ինչպես նաեւ կարող է սովորեցնել թշնամու կամ հակառակորդի ուժն օգտագործել նրա դեմ:

Այլիպողն ճապոնական մարտարվեստ է, որը ստեղծվել է վաղուց Մորիհեյ Ռեսիբայի կողմից՝ 20-րդ դարի առաջին կեսին: Նա ստեղծել է այնպիսի մարտարվեստ, որը թույլ է տալիս վնասվածքներից պաշտպանել ոչ միայն ինքն իրեն, այլեւ հարձակվողին: Այլիպողն ճապոնական երեք հիերարխիքներից բաղկացած տերմին է, մշակվում է՝ ներդաշնակություն, միավորում, միաձուլում: Կի՝ հոգու էներգիա, կենսական էներգիա, շնչառություն, շարժում, ուժ: Դո՝ ճանապարհ, ուղի: Այլիպողի տեխնիկայի մեջ շեշտը դրված է հակառակորդի հարձակման հետ միաձուլվելու, հարձակվողի էներգիան վերադարձնելու վրա, որն ավարտվում է ցավեցնող հնարով կամ նետմամբ: Այլիկայը այլիպողի օրիգինալ դարձնել է, որը ստեղծվել է վարպետ Ռեսիբայի կողմից: Մեր նպատակն է Արցախում զարգացնել օրիգինալ այլիպող, այդ պատճառով ֆեդերացիան անվանել ենք Արցախի այլիպող այլիկայ ֆեդերացիա: Ինչքան ժամանակ է, որ ֆեդերացիան սկսել է Արցախում գործունեություն ծավալել: Արցախի այլիպող այլիկայ ֆեդերացիան արտահայտված է արցախցիների կողմից: Այսպիսով, արցախցիները հետո մտադրել են հատուկ նշանակության ստորաբաժանումներում, ունեն մեծ փորձ անվտանգության համակարգում աշխատելու, որտեղ կարելի է ոչ միայն ֆիզիկական պատրաստվածությունը, այլեւ այնպիսի հատկություններ, ինչպիսին են

համբերատարությունը, զսպվածությունը, ինքնատիրապետումը տարբեր ոչ ստանդարտ իրավիճակներում: Այսպիսով նախապատվություն տալ այլիպող մարտարվեստին, քանի որ այն հենց այս հատկություններն ու տվյալներն է ձեւավորում դրանով պարապող մարդու մտ: Այդ նկատառումից էլ ընկելով՝ մտածեցի Արցախում ստեղծել ֆեդերացիա, բացել խումբ ու այդ շատ կարելու մարտարվեստը զարգացնել մեզ մոտ, այս ձևով նպաստել մեկ ընդհանուր նպատակի՝ ունենալ հզոր երկիր: Ովքեր կարող են դիմել պարապմունքների հաճախելու համար: Այլիպողն բոլորի համար է: Ընդունելության հետ կապված սահմանափակումներ չկան, կարող են դիմել տղաներ ու աղջիկներ՝ սկսած 6 տարեկանից, ինչպես նաեւ մեծահասակներ: Ընդունվում են աղջիկներ ու կանայք: Այլիպողն երաժույց է այնպիսի հնարներ, որոնց կատարման համար պարտադիր չեն ուժեղ ֆիզիկական տվյալներ կամ մկանային զանգված, ընդհակառակը, թույլ կամավածքով կամ ֆիզիկական խնդիրներ ունեցող մարդիկ սովորում են պաշտպանվել իրենցից վաղուց ուժեղ հակառակորդներից՝ օգտագործելով նրանց ուժը հենց նրանց դեմ: Այլիպողն օգնում է նաեւ ազատվել հոգեբանական բարդություններից, դառնալ ինքնավստահ, տոկոսն: Այլիպողում ինչպե՞ս են որոշում տիրապետելու աստիճանը, մրցույթներ կա՞ն:

Այլիպողում մրցույթ չկա: Մարզիկի տիրապետելու աստիճանը որոշվում է գոտեւորմամբ: Գոտին ստանալու համար մարզիկը հանձնում է համապատասխան քննություն: Բայց չեն բացառվում եւ այնպիսի դեպքեր, երբ պարապողը չի ցանկանում քննություն հանձնել: Օրինակ՝ սիրողական պարապողները, առողջ ապրելակերպի հետևորդները կարող են զբաղվել այլիպողով առանց քննության: Երեխաների մոտ ի՞նչ հատկություններ կարող է զարգացնել այլիպող: Նախ պետք է նշել, որ այլիպողում ազդեցիկ բացառված է այստեղ չկա հարձակում: Այսպես մարզիկների հետ տարվում է բացառական աշխատանք նախքան բուն հնարներ մատուցելը: Պարապողը պետք է հասկանա, թե ինչու է սովորում տվյալ տարրը, եւ ինչ դեպքում է պետք այն կիրառել: Երեխան, ինչպես եւ մեծահասակը, նախ եւ առաջ սովորում են կարգապահություն եւ կուլեկտիվում իրար հարգելու սկզբունքները: Սովորում են հեռու մնալ վնասվածքներից: Այլիպողն դրական է ազդում ուսման առաջընթացին վրա: Երեխաների մեջ ձեւավորելով դրական հատկանիշներ՝ այլիպողն նպաստում է այն բանին, որ երեխան ավելի հետևողական է դառնում դասերի եւ շրջապատի մարդկանց հետ շփվելու նկատմամբ: Կարելի է այլիպողն համատեղել այլ մարզաձևերի հետ: Այո: Կան մարզաձևեր, որոնցում որոշ հնարներ վերցված են այլիպողից: Առանց կանոնների մարտերում շատ են օգտագործում այլիպողի տեխնիկայից փոխառված տարրեր: Եթե մարզիկը այլիպողն համատեղել այլ մարզաձևի հետ, վստահաբար ավելի լավ արդյունքներ կունենա: Օգտվելով հնարավորությունից՝ ուզում են նշել, որ մեր ֆեդերացիայում տարանջատումներ չկան՝ կապված այլ մարզաձևերի հետ: Ընդհակառակը, մենք հարգալից վերաբերմունք ենք ցուցաբերում բոլոր մարզաձևերի, մարզիկների եւ մարզիչների հանդեպ: Պատրաստ ենք աշխատել եւ համագործակցել բոլոր դիմորդների հետ՝ անկախ ամեն ինչից: 21՝ որ մենք բոլոր համախմբված ենք մեկ ընդհանուր նպատակի շուրջ՝ ունենալ կոփված սերունդ, հզոր երկիր:

ՄԵՐ ՀԱՅՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի սովորողների ֆիզիկական դաստիարակությունը կրթօջախի ուսումնադաստիարակական աշխատանքների անբաժանելի մասն է: Այն ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է սովորողների առողջության ամրապնդմանը և համակողմանի, ներդաշնակ զարգացմանը: Իմ՝ որպես ֆիզիկական դաստիարակության առողջ, համակողմանի զարգացած, աշխատանքային գործունեությանը նախապատրաստված, առողջ ապրելակերպի կանոններին տիրապետող, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող քաղաքացի ձևավորելն է: Տարբեր սպորտային խաղերը և նպաստում են սովորողների ինքնավստահության, համարձակության, ինքնուրույնության, կազմակերպվածության, դժվարությունները հաղթահարելու հաստատականության, կարգապահության, ընկերասիրության, փոխօգնության դաստիարակմանը: 30-31-ը 33 մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների «Ապարտակիադա» մարզական միջոցառման ծրագրով սեղանի թենիսի եզրափակիչ փուլի մրցումներին մասնակցել են նաև մեր ուսումնարանի երկու սովորողներ: Նրանցից Լեոնիդ Ավանեսյանը գրավել է մրցանակային 2-րդ տեղը (մարզիչ՝ Կարոժան Բաղդասարյան): Ընդհանրվում են նրանց և մադթում, որ հաղթանակները լինեն շարունակական: Լ ԱՆԵՋԱՆՅԱՆ Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի ֆիզիկական

Ստյա ԱՎԱԳՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅՑ

«ՌՈՒՆԸ» ԵԿԱՎ ՆԱԵՎ ԱՐՑԱԽ

2001 թվականից Երևանում գործում է «Ռուլան Բիկով» հիմնադրամը, որի նպատակն է իրականացնել մշակութային, կրթական, մարդու իրավունքների և սոցիալական ծրագրեր ուղղված երեխաների և երիտասարդների ազգային և համաամերիկյան արժեքների դաստիարակությանն ու բազմակողմանի զարգացմանը: Հիմնադրամը, ի թիվս բազմաթիվ ծրագրերի, «Ռուլան» մանկապատանեկան ֆիլմերի միջազգային ամենամյա փառատոնի կազմակերպիչն է:

Նոյեմբերի 5-9-ը «Ռուլան Բիկով» հիմնադրամը կազմակերպել է «Ռուլան» մանկապատանեկան ֆիլմերի հոբբի-ֆեստիվալի 15-րդ միջազգային փառատոնը Երևանում, ՀՀ մարզերում (Շիրակ, Լոռի, Գեղարքունիք, Արմավիր, Կոտայք, Արարատ, Արագածոտն) և Արցախում:

Նոյեմբերի 27-ին փառատոնի կազմակերպիչներն Արցախում էին: Նրանք հանդիպումներ ունեցան Ազգային ժողովում, հանրային հեռուստատեսությունում, հ. 8 դպրոցում, իսկ երեկոյան «Վալեթս գարդեն հոբբի»-ի կինոդահլիճում ցուցադրվել է «Անիկո» ֆիլմը:

«Ռուլան Բիկով» հիմնադրամը արդեն երկար տարիներ համագործակցում է «Վալեթս» խմբի ընկերությունների հետ: Նրա աջակցությամբ փառատոնի «Լավագույն երկարամետրաժ խաղարկային ֆիլմ» անվանակարգում որպես ժյուրի ներգրավվել է Արցախի 11 երեխաների: Նոյեմբերի 8-10-ը նրանք ներկա են եղել Երևանում անցկացված փառատոնին, որի ընթացքում հնարավորություն են ունեցել ծանոթանալ Երևանի տեսարժան վայրերին, հանդիպումներ ունեցել անվանի կինոգործիչների հետ, մասնակցել կինոդահլիճում, քննարկումների: Նոյեմբերի 9-ին երեխաները մասնակցել են փառատոնի փակման արարողությանը, բարձրացել են բեն և հայտարարել իրենց կողմից ընտրված հաղթող ֆիլմը, մրցանակ հանձնել այդ ֆիլմի ռեժիսորին: «12-14 տարեկան 11 պատանիներ և աղջիկներ իրենց գնահատական են տվել ֆիլմերին: Հրաշալի պատրաստված, ֆիլմերից հասկացող, ներքին զգացողությամբ երեխաներ, որոնք բարձր պահեցին իրենց պատիվը կինոյի դաշտում իրենց ինքնուրույն»,- ասաց «Վալեթս» ընկերությունների խմ-

բի ներկայացուցիչ Թագուհի Կարապետյանը: Արցախի հանդիսատեսի հետ հանդիպմանը «Ռուլան Բիկով» հիմնադրամի նախագահ Նուրե Մանուկյանը նշեց, որ «Ռուլան» մանկապատանեկան ֆիլմերի փառատոնը 15-րդ անգամ է անցկացվում: Արցախի հետ համագործակցում են 2006 թվականից, և այդ բոլոր տարիներին փա-



ռատոնի լավագույն ֆիլմերը ցուցադրվել են այստեղ:

Հանդիպմանը ներկա էր փառատոնի պատվավոր հյուր, Երևանի տիկնիկային թատրոնի ղեկավար Ռուբեն Բաբայանը: Նա կարևորեց մշակութային միջոցառումների անցկացումը Արցախում, քանի որ դրանք հնարավորություն են տալիս ստեղծել լավագույն գործեր, ինչը շատ անհրաժեշտ է աշխարհին ներկայանալու համար: «Պետք է այնպես անենք, որ հայկական մշակույթը զարգանա, որ բոլորս միասին կարողանանք աշխարհին ներկայանալ մեր հարուստ մշակույթով, քանի որ մենք հաստատ ներկայանալու բան ունենք, ընդ որում՝ ոչ միայն երեկվա մշակույթով, այլև այսօրվա: Մենք չենք կարող ապրել միայն մեր նախնի մշակույթով: Լավագույն հարգանքը մեր հարուստ մշակույթին կլինի այն, որ շարունակենք ճիշտ ստեղծել մեր մշակութային գործեր»,- ասաց նա:

«Անիկո» ֆիլմի ռեժիսորը երիտասարդ դերասանուհի Աննա Հարությունյանն է: Ֆիլմը նրա

ղեկավարն է, և ինչպես ինքն ասաց, իր համար շատ թանկ է արցախցի հանդիսատեսի կարծիքը: «Անիկո» ֆիլմը ինքնակենսագրական տարրեր է պարունակում, բայց նրանում շատերը կտեսնեն իրենց մանկությունը: Ֆիլմը դպրոցական մի անցկա մասին է, որն իր ամառային արձակուրդն անց է կացնում գյուղում՝ միայնակ ապրող պապի մոտ: Ֆիլմի «Սկիզբում է բոլոր պապիկներին» տողն էլ ամփոփում է հիմնական գաղափարը: Հանդիսատեսը համակրում է պապին, որն իր ամենօրյա գյուղական աշխատանքների հետ միասին հոգ է տանում թռնուհու մասին, ընդհուպ՝ նրա շորերը լվանալը, մաքրությունը հետևելը, նրա համար ճաշ պատրաստելը և այդպեանման զբաղմունքները: Ժամանակ է գտնում գիրք կարդալ և թռնանք էլ մղում է դեպի ընթերցանությունը: Ամեն օր մի հետաքրքիր զբաղմունք փնտրող Անիկոն ունենում է արկածներ: Նոր ուսումնական տարին սկսվելու կապակցությամբ վերադառնում է քաղաք, բայց դասընկերոջ հետ մի դիպված խոր վիրավորում է նրան, և ֆիլմի վերջում տեսնում ենք նրան գլխավորությամբ կազմակերպող ժամանակակից: Այստեղ է ֆիլմի գլխավոր գաղափարը. յուրաքանչյուրի համար յուրատեսակ փրկության դուռ է պապերի օրրանը, և այն չպետք է լքել:

Ֆիլմի վավերից հետո երիտասարդ ռեժիսորի խոսքն էլ բոլորովին զարմանալի չէր, որ գիրք կարդալու յուրատեսակ քարոզ էր. «Եթե չես ընթերցում, քեզ շատ կարևոր բանից զրկված ես զգում: Գրականությունն այն աշխարհն է, որը մարդուն կարող է տանել այնպիսի ճանապարհներով, որ երբեք մտքով չի անցնի: Կարևոր չէ, թե ինչ մասնագիտություն ունես: Գրականությունն այն ուժն է, որ քեզ կարող է օգնել, երբ դու անձնական խնդիր ունես: Ընթերցանության միջոցով կարող ես ձեռք բերել ընկերներ, որոնք երբեք քեզ չեն դավաճանի, քեզ միշտ ճիշտ խորհուրդ կտան»:

Հավելենք, որ փառատոնի մասնակիցները այցելել են նաև Մարտակերտ, որտեղից նույնպես երեխաներ են ընդգրկված եղել փառատոնի ժյուրիի կազմում:

հետք հիշատակի ՄԱՐԳՈ ԱՍԺԱՏՈՒՐԻ ԱՆՍՈՆՅԱՆ



Ծանր հիվանդությունից հետո նույնիսկ 21-ին կյանքից հեռացավ հանրապետության լավագույն մանկավարժներից մեկը՝ Մարգո Աստատուրի Ահարոնյանը:

Մարգո Ահարոնյանը ծնվել է 1928թ. փետրվարի 10-ին Մարտակերտի շրջանի Դրժբոն գյուղում: 1944թ. գերազանց գնահատականներով ավարտել է Մարտակերտի միջնակարգ դպրոցը, իսկ 1949-ին առաջին կարգի դիպլոմով՝ Բաքվի Վ.Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Նույն տարվանից որպես ուսուցչուհի և ուսնաավար երկար տարիներ աշխատել է Դրժբոն, Չլդրան, Հարությունազոմեր, Կուսապատ, Չայլու, Մարտունու շրջանի ճարտար գյուղերի միջնակարգ դպրոցներում:

Մ. Ահարոնյանը նվիրյալ ուսուցչուհի էր: Նա սիրով կազմակերպում էր արտաժամյա պարային խմբեր արաբադան սովորողների հետ: Արդյունքում նրա մի շարք աշակերտներ դպրոցն ավարտել են ոսկե և արծաթե մեդալներով:

Մարգո Ահարոնյանը 1966թ. տեղափոխվել է Ստեփանակերտ, աշխատանքի անցել քաղաքի հեղափոխային դպրոցում՝ որպես ուսուցչուհի և ուսնաավար: Փորձառու մանկավարժ երբեք չի բավարարվել միայն դասավանդելով: Ակտիվորեն մասնակցել է հանրապետությունում և մայրաքաղաքում կազմակերպված ուսումնակրթական միջոցառումներին, ելույթներ ունեցել որպես առաջավոր մանկավարժ՝ տպագրելով «Տարիների լույսը» ուսումնամեթոդական գրքույկը, որն արժանացել է մասնագետ ընթերցողների լուրջ ուշադրությանն ու բարձր գնահատականին: Նա պարգևատրվել է «Սոցիոլոգիայի հաղթող» կրթաբանական մի շարք պատվոգրերով:

Քառասուն տարվա մանկավարժական աշխատանքի ստաժով անցել է կենսաթոշակի: Մարգո Ահարոնյանը 20-րդ դարի Ստեփանակերտի լավագույն մանկավարժներից է: Նրա սաներից շատերը դարձել են անվանի գիտնականներ: Տարիների ընթացքում նրանք իրենց երախտագիտությունն են հայտնել անմոռանալի ուսուցչուհուն՝ բարձր գնահատելով նրա վաստակը մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում:

Հաճելի է նշել, որ Մ. Ահարոնյանի հայրական ընտանիքի ութ զավակները՝ 3 տղա և 5 աղջիկ, ստացել են բարձրագույն կրթություն մաթեմատիկայի և ֆիզիկայի գծով, աշխատել Մարտակերտի շրջողկրթաբանում, Արցախի բուհերում ու դպրոցներում:

Մարգո Ահարոնյանը երջանիկ մայր ու տատիկ էր:

Վաստակաշատ ուսուցչուհու վաղ հիշատակը երկար կյանքի հարազատների և նրան ճանաչողների սրտերում:

Այ կրթության, գիտության և սպորտի նախարարություն

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐԻ ՓԱՌԱՏՈՆ ԱՆՆԱՆ ԳՈՒՅՆԵՐՈՎ

Արդեն երեք տարի է՝ «Ազգային երգ ու պար» առարկան մտցվել է հանրակրթական դպրոց: Ազգային ինքնության պահպանմանը, սովորողների հայեցի դաստիարակությանն ուղղված ավանդական առարկաների շարքում այն իր ուրույն տեղն է գրավում: Առարկան դասավանդող ուսուցիչները, որոնք վերապատրաստվել են «Կարին» ազգագրական համույթի ղեկավար Գագիկ Գինոսյանի ղեկավարությամբ, զանազան միջոցներ են ձեռնարկում առարկայի նկատմամբ սեր առաջացնելու համար:

Օրերս հետաքրքիր նախաձեռնությանը հանդես եկավ Ստեփանակերտի Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոցի «Ազգային երգ ու պար» առարկայի ուսուցչուհի Լուսինա Գրիգորյանը: Դասերից հետո դպրոցի բակում 5-րդ, 6-րդ և 7-րդ՝ 12 դասարանի 300 աշակերտի մասնակցությամբ անցկացվեց բաց դաս: Եվս մեկ դասարան միացել էր հ. 5 դպրոցից: Հանդիսատեսների շարքում դպրոցի մանկավարժներն էին, աշակերտները, ծնողները: Բացօթյա այս համերգը անտարբեր չէր թողել ոչ մեկին: Մի քանի շրջան կազմած երեխաները պարեցին «Գորանի», «Շավալի», «Թամգարա», «Կոմիտասի «Շորոր», «Կարոն քոչարի»: Աշանային ջերմ ու գեղեցիկ ելմանակը՝ դպրոցի շրջակայքի գունեղ պատկերներով,

միախառնված հայկական երաժշտության զիլ հնչյուններին ներկաների մոտ ստեղծել էր բարձր տրամադրություն, և նրանք ծափողջույններով ոգևորում էին պարողներին:

Դարեր առաջ հայկական ազ-

տոնը տեղափոխվեց տաղավարներ, որտեղ դասարանները կատարեցին «Թամգարա», «Խնոցու երգը», «Արիշտայի երգը» և ազգագրական այլ երգեր: Տաղավարներում աչք էին շոյում մրգերի ու բանջարեղենի հետաքրքիր «կերպարները», հայկական խոհանոցի համեղ ուտեստները: Ամեն ինչ խոսում էր այն մասին, որ հսկայական աշխատանք է կատարվել, որում ներգրավվել են դպրոցի տարբեր մասնագետներ, մասնավորապես՝ տեխնոլոգիայի, կերպարվեստի: Եվ մեծ դերը, անշուշտ, ծնողներին էր, որոնք ամեն ինչ հայթայթել էին իրենց երեխաների ուսումնական այդ օրը տոնի վերածելու համար:

ցառումները. ազգային դիմագիծը, նկարագիրը պահողները վաղ այս սերունդն է լինելու:


Բոլոր դասարանները դպրոցի տնօրինության կողմից խրախուսվեցին շնորհակալագրով: Ընդհանրապես հայտնվեց նաև միջոցառման մտահղացման գլխավոր դերակատար Լուսինա Գրիգորյանին: Ի դեմս նրա՝ տնօրենը նկատել տվեց, որ երիտասարդները մոտ շունչ են բերում դպրոցին:

Ուսուցչուհին ասաց, որ վաղուց էր մտածում այդպիսի տոնակատարություն կազմակերպել երեխաների համար: Իսկ գեղեցիկ եղանակն էլ հուշեց այն դպրոցի բակում անցկացվել: Նշեց, որ երեխաները մեծ սիրով են մասնակցում դասերին: Հենց զանգը հնչում է, վազելով մտնում են դահլիճ և չեն էլ ուզում դուրս գալ: Նրանք արդեն տիրապետում են ազգային մի շարք պարերի և իրենց ելույթով միշտ էլ աշխուժություն են հաղորդում շրջապատին:

Քաղաքապետարանի ԿՍ բաժնի մասնագետ Անահիտ Մեսրոպյանն իր գնահատականը տալով միջոցառմանը՝ դրվատեց միջառարկայական կապը և համագործակցությունը ուրիշ դպրոցի հետ:

Դաս-փառատոնը հավակնում է դառնալ ավանդական:

Սեփ. լրատվություն



գային երգն ու պարը ծիսական նշանակություն են ունեցել և ժամանակի հետ մոտ իմաստներ ձեռք բերել: Բաց պարապմունք լինելուց բացի տվյալ պարագայում այն հրաժեշտ էր բերքառատ աշնանը: Այդ մասին խոսում էին նաև դպրոցի բակում ձևավորված տաղավարները՝ պարերին համահունչ «Գորանի», «Թամգարա», «Յարխուշտա» անուններով: Դրանք ստեղծել էին պարող դասարանները միացյալ ուժերով, անշուշտ՝ ծնողների օժանդակությամբ:

Պարահրապարակից փառա-

դպրոցի տնօրեն Անահիտ Հակոբյան ասաց, որ սերնդի հայեցի դաստիարակության համար անչափ կարևոր են նման միջո-

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՍՐԱԳԻՐ
Ս. ԽԱԶՆՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլան» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3000: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 4.12.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությանը: